Սույն գիրքը թվայնացվել է Գրքասեր ՀԿ-ում՝ հայերենով գրականության պահպանման, հանրայնացման և ժամանակակից թվային միջավայրում հասանելի դարձնելու նպատակով:

Կազմակերպության նախաձեռնությունը միտված է հայերեն գրքերի և տեքստերի տարածմանը, ընթերցանության խթանմանը և մշակութային ոչ նյութական ժառանգության պահպանությանը՝ ապահովելով դրանց հասանելիությունը հնարավորինս լայն շրջանակների համար:

Մենք հավատում ենք, որ թվայնացումը ոչ միայն պահպանման միջոց է, այլև գիտելիքի, գրականության և մշակույթի շարունակական փոխանցման կարևոր ուղի:

Գրքասեր ՀԿ-ն գրքերը ձայնագրում և թվայնացնում է բացառապես Ձեր նվիրատվությունների շնորհիվ: Կազմակերպությանը կարող եք օժանդակել հետևյալ հղումով՝

https://grqaser.org/hy/donate

Ստուգված
Իսպանական գրականություն, Արձակ
13+
Թարգմանիչ՝ Աշոտ Քերոբյան

Ֆեդերիկո Գարսիա Լորկա
Ինչպես է երգում քաղաքը նոյեմբերից նոյեմբեր

Տիկնայք և պարոնայք:

Ինչպես երեխան՝ հմայված մոր տոնական զուգվածությամբ, հյուրին քաշում է նրա մոտ, այդպես էլ ես եմ ուզում ձեզ ցույց տալ իմ Իմ Գրանադան: Դա անհնար է առանց երաժշտության, և ես պիտի երգեմ, չնայած վարպետ չեմ: Ես երգում եմ պոետի պես, ավելի ճիշտ՝ ինչպես ամեն մի խաշնարած: Ձայնս աղքատ է և կոկորդս էլ սոխակի չէ: Եվ միք զարմանա, եթե տեղ-տեղ աքլորի պես ծղրտամ: Այնուամենայնիվ, այդ դավաճան թևավորը, հավատացնում եմ, չի լինի այն չար թռչունը, որ ճանկռոտում է տենորներին ու ծվատում է նրանց փառքը, և, եթե հանկարծ դուրս թռնի կոկորդիցս, ես կիմայեմ նրան և կասեմ՝ արծաթե թռչուն, նստիր աղջկա ուսին, այս դահլիճի ամենաթախծոտ աղջկա:

Բնիկ գրանադացին, եթե վերադարձել է օտարությունից ու ճանապարհին կուրացել է, տարվա եղանակը կորոշի փողոցում հնչող երգերից:

Եկեք մենք էլ փակ աչքերով անցնենք: Թողնենք մեր աչքերը սառցե սկուտեղի վրա, որ այսուհետ միայն սուրբ Լուսիան չպարծենա:

Եվ հանուն ինչի՞ քաղաքի հետ հանդիպումը պիտի աչքերին վստահել և ոչ թե քիմքին կամ հոտառությանը: Ընկույզով մեղրաբլիթը, նշով կարկանդակն ու Լուսախարայի վանիլով հրուշակը, Գրանադայի մասին քիչ չեն պատմի, քան հախճասալիկը կամ մավրիտանական մի կամար, իսկ ուլունքաշար անիսոնի և սալորի զարմանալի եզրազարդերով տոլեդյան նշակարկանդակը, որը Կարլոս Հինգերորդի խոհարարի հնարածն է, ավելի շատ է մեկնում նրա գերմանական էությունը, քան նրա շեկ մորուքը: Եվ, եթե տաճարը կպած է այն հնությանը, որի մաշված երեսը հավիտենական է ու անհասանելի այսօրվա օրվան, ապա երգը հասնում է մեզ մեկ ցատկով՝ կենդանի ու թպրտացող, ինչպես փոքրիկ գորտ, ու նրա թախիծների և ուրախությունների թարմությունը պակաս հրաշք չէ, քան փարավոնի

դամբարանից գտած ցորենի ծլարձակումը: Այսպես, ուրեմն. եկեք ունկնդրենք Գրանադան... (ձեռագրում էջ է պակասում):

Տարին, ինչպես գիտեք, ունի. չորս եղանակ՝ ձմեռ, գարուն, ամառ, աշուն:

Գրանադան ունի երկու գետ, ութսուն զանգակատուն, չորս հազար ջրհոսք, հիսուն աղբյուր, հազար ու մեկ շատրվան և հարյուր հազար բնակիչ: Այս բոլորից զատ կա լարային գործիքների գործարան և խանութ, որտեղ վաճառում են դաշնամուր ու շրթնհարմոն և, որ կարևոր է՝ դափ են ծախում: Հանգստավայր էլ ունի. երկուսը երգերի համար՝ Սալոնն ու Ալ-Համբրան, իսկ մեկն էլ արցունքների համար՝ թախիծի ծառուղին: Եվրոպական ռոմանտիզմի բուն էությամբ մի վայր և, ի լրումն սրանց, հրարվեստավորների մի մեծ զորաբանակ, որոնք իրենց զվարճալի աշտարակները կառուցում են Առյուծի պալատի հայելային ոճով, ուր ջրերի անշարժ երկրաչափությունն անգամ մռնչում է առյուծի կատաղությամբ:

Մեկ ժայռեղեն, մեկ ձյունե, մեկ տեսիլականաչավուն լեռնապարը կախվում է երգերի վրա և, ճախրելու անկարող, նրանք թափվում են կղմինդրե ծածկերին, այրվում են շողերի մեջ կամ էլ շնչահեղձ են լինում հուլիսյան կծղած հասկերի մեջ:

Այդ երգերը դեմքն են քաղաքի և նրանցով է չափվում քաղաքի զարկերակը:

Ահա մոտենում ես և առաջին բանը, որ որսում ես՝ դաղձի և իշառվույտի բույրն է, բույրը խոտերի, որ տրորվել են ջորիների ու ձիերի սմբակների տակ, պճեղներից եզների, որոնք ցրված են գրանադական ողջ սարահարթով: Երկրորդը ջրի ձայնն է: Ոչ այն խելառ ջրի, որ հոսում է՝ ուր խելքը փչի: Ոչ թե աղմկոտ, այլ ռիթմիկ ջրի, հանդարտ հունի երկրաչափությամբ շտկված և հարմարված ոռոգման կարիքներին: Այն ջրի, որ հագեցնում է և երգում հարթության վրա, այն ջրի, որ տառապում է և տնքում՝ լեցուն փոքրիկ լուսավոր ջութակներով այնտեղ՝ վերևներում, Խեներալիֆների այգիներում: Այստեղ խաղ չկա: Խաղը Վերսալի համար է, որտեղ ջուրը հանդիսախաղ է, չափազանցված ինչպես ծով, ինչպես երգելու անընդունակ ճարտարապետական հանդիսավոր մի համալիր: Գրանադայի ջուրը ծարավ է հագեցնում: Նա ապրում է և ձուլված է նրանց՝ ով խմում է կամ լսում է նրան, կամ էլ ուզում է մեռնել նրա մեջ: Նա հասկանում է շատրվանի հոգեվարքը՝ ջրափոսում հանգչելուց առաջ: Այդ նրա մասին է Խուան Ռամոն Խիմենեսն ասել.

Ինչ տառապանք է. համբերատար
զառանցել անվերջ ազատ մի կյանք,
կռիվ տալ, ինչպես տեսիլքի դեմ,
փակուղիներում պաղ ու հավերժ,
և բաց ճակատով խփվել պատին,
կռվել քարի դեմ լուռ ու անշարժ:
Երազում վերջին միայն տեսնել
ինքդ քեզ մի քիչ անհառաչանք:

Բացի սրանցից կա ևս երկու հարթավայր, երկու գետ: Նրանց ջրերը չեն երգում, այնտեղ արդեն ազատ աղմուկ է, մուժ է՝ խառնված լարերի հետ քամու, որ ուղարկում են սարերը: Դա Խենիլն է՝ բարդիներով. խավավորված և Դաուրոն՝ հիրիկներով եզրավորված:

Բայց ամեն ինչ չափավոր է, ամեն ինչ հաշտ է մարդու հետ: Ջուրն ու Քամին եթե քիչ են՝ հարմար լսելիք են: Սրա մեջ է Գրանադայի հմայքն ու եզակիությունը: Ամեն ինչ ներքին հարդարանքի համար է. փոքրիկ մի բակ, մի փշուր երգ, մի մատնոց ջուր ու քամի, որ պարում է ափիդ մեջ:

Կանտաբրիյական ծովը կամ էլ թունդ քամին, որ փշրվում է Ռոնդի ժայռերին, վախեցնում են սսկված, ներփակ, լուսամուտի շրջանակով բանտարկված գրանադացուն: Ձեռնասուն են դարձել ջուրն ու քամին, քանի որ տարերքների եռքը կոտրում է մարդկային ձայնաշարը և սրբում, հյուծում է մարդկային անհատականությունը, որը չի կարողանում գերիշխել այլևս և կորցնում է իր հորիզոնն ու երազը: Գրանադացին ամեն ինչ տեսնում է շրջված հեռադիտակով: Այդ պատճառով է, որ Գրանադան հերոսներ չի տվել, այդ պատճառով էլ

նրա զավակներից ամենափառավորը՝ Բոաբդիլը, զիջեց քաղաքը կաստիլցիներին, այդ պատճառով էլ քաղաքը դարերով իր ապաստանը փնտրում է մեկուսացման մեջ, լուսնի լույսով նախշազարդված մլմլացող օջախների շուրջը:

Գրանադան ստեղծված է երաժշտության համար, որովհետև նա գերեվարված քաղաք է, ժայռերի մեջ փակված, քաղաք, ուր հղկում են մեղեդին, թաղում են և երկարացնում պատերն ու ժայռերը: Երաժշտությունը ներամփոփ քաղաքների ժառանգությունն է: Ե՛վ Սևիլյան, և՛ Մալագան, և՛ Կադիսը հոսում են իրենց ծովային դարպասներով, իսկ Գրանադան այլ ելք չունի, քան իր երկնային աստղազարդ նավահանգիստը: Նա ռիթմերի ու արձագանքների հանդեպ զգայուն ճգնավոր է, հենց ինքը մեղեդի է:

Նրա ամենաթանձր մարմնավորումը ոչ թե պոեզիան է տալիս, այլ երաժշտությունը միստիկա տանող այդ փշե ճամփան: Դրա համար էլ նա այնպես դրամատիկական չէ, ինչպես Սևիլյան՝ Դոն Խուանի քաղաքը, այդ սիրո քաղաքը, սակայն քնարական է, և, եթե Սևիլյան հրճվում է Լոպեի, Տիրսոյի և Բոմարշեի, Սորիլյոյի գործերում և Բեկկերի արձակի մեջ, ապա Գրանադան իր շատրվանների նվագախումբն է՝ լեցուն անդալուզյան տխրությամբ և վիուելլա է Նարվաէսի ձեռքին, և՛ Ֆալյա է, և՛ Դեբյուսի: Եվ, եթե Սևիլյայում իշխում է մարդկայինը, և պատերի տակ շրջում են Դոն Պեդրոն ու Դոն Ալոնսոն, Ֆիգարոն ու Մանյարան, ապա Գրանադայում միայն տեսիլներ են թափառում նրա լքված երկու պալատներում, և զնգուն խթանները դառնում են մարմարե անեզր հատակների վրա մոլորված քնկոտ մժղուկներ, սիրային երկտողը՝ մի փունջ խոտ, իսկ սուրը փխրուն մանդոլին, որի լարերին համարձակվում են դիպչել միայն սարդերն ու սոխակները:

Մենք հասել ենք Գրանադա, նոյեմբերն սպառվում է: Այրվող ծղոտի բույր է, և արդեն փտում են թափվող տերևների կույտերը: Անձրևի հեղեղ է և դատարկ է քաղաքը: Սակայն Արքայական դարպասների մոտ մի քանի կրպակ կա: Լեռները փաթաթվել են ամպերով և կարծես ներծծել են իրենց մեջ Հյուսիսի ողջ պոեզիան: Արմիլիայից, կամ էլ Սանտա Ֆեից, կամ էլ Ատարֆեից մի աղջիկ, աղախին երևի, վերցնում է կրպակից սամբոմբան և սկսում է չորս խաշնարածների մասին երգը.

Գետանցի այն չորսից,
որ մոտ են ջրհոսին,
այն մեկը՝ ջորովը,
կուզենամ ինձ հասնի:
Գետանցի այն չորսից,
(քիչ մոտ են կայանին)
ջորովը սրտովս է,
կդառնամ նրան կին:

Երբ քեզ կրակ է պետք,
ումի՞ց ես դու առնում.
նայիր աչքերիս մեջ,
ածուխներ են վառվում:

Սա վիլյանսիկոյի մեղեդի է, որ հնչում է ողջ շրջանում, և որը մավրերը իրենց հետ Աֆրիկա տարան, որտեղ այն մինչև այսօր էլ հնչում է Թունիսում և հնչում է այսպես (մեղեդու արաբական մի տարբերակ է հնչում):

Չորս խաշնարածի մասին երգում են՝ մեկ-մեկ ծղոտ գցելով կրակի մեջ, շրջապատի բոլոր գյուղերում և այն հեռուներում, որոնք պսակի պես հյուսված են լեռնապարին:

Սակայն մոտենում է դեկտեմբերը, երկինքը պարզվում է, երամներով քշում են սագերին և դափերը, սամբոմբաներն ու ճտճտանները խլացնում են քաղաքը: Գիշերով փակ տներում լսվում է նույն մեղեդին, որը հոսում է պատուհաններից դուրս ու խողովակներով՝ կարծես իսկապես հողից է քամվում: Ձայները զորանում են, փողոցները լցվում են նախշուն վաճառարկղերով, խնձորների թեջերով, կեսգիշերային զանգը արթնացնում է ղողանջը, որով միանձնուհիները շտապեցնում են լուսաբացը, իսկ Ալ-Համբրան ավելի է մթնում, ավելի

է դառնում մարդախույս, և հավերը պահում են ձվերը ցրտից կապտած ծղոտի մեջ: Արդեն սուրբ Թոմայի միանձնուհիները Անարատ Կույսին վեղար են հագցնում, իսկ սուրբ Հովսեփի գլխին դնում են դեղին տափակ գլխարկ: Արդեն կավե ոչխարներն ու բրդե շնիկները ցատկոտում են խաղալիքե մամուռների սանդուղքներով: Արդեն ասեկոսեներ են գնում, և ահա այդ շաղակրատանքի խցանների ճայթոցի միջից, քերիչների ու պղնձե հավանգների զրնգոցից դուրս է պրծնում ջրօրհնեքի ռոմանսը ջահել ուխտավորների մասին.

Ջուխտ ուխտավոր անքսակ
եկան, հասան պապին,
որ օրհնի նա պսակը
խորթ քրոջ ու եղբոր:
Փեսացուն ժապավենը
չալմա էր դարձրել,
հարսնացուն դրել էր
Դիպակե գլխարկն իր:
Սակայն կամրջի մոտ
Նրանց դողը բռնեց,
փեսացուն մի բան չէր,
հարսնացուն դեռ ոչինչ:
Երբ գահին մոտեցան
պապի ճոխ պալատում,
հարսնացուն ու փեսացուն
ձեռից գնացին:
Հարցնում է պապը.
— Ի՞նչ է անունդ:
Փեսացուն թե՝ Պեդրո,
հարսնացուն՝ Աննա:
Հարցնում է պապը.
— Ի՞նչ տեղերից եք:
Տղան թե՝ Կաբրի,
աղջիկը՝ Ռոնդից:
Հարցնում է պապը.
— քանի՞ տարեկան եք:
Տասնհինգ ու տասնյոթ,—
լսվեց պատասխանը:
Հարցնում պապը.
— Ի՞նչ մեղք եք գործել:
Համբուրվել ենք թաքուն,
եթե դա մեղք է:
Իսկ աղջիկը արդեն
վարդից էլ կարմիր էր,
հենց լսել էր հարցը՝
բոցավառվել էր:
Մեկնեց պապը խաչը
ու մտքի մեջ ասաց.—
Այսպիսի մեղսագործ
գոնե մի զույգ էլ կա՞:
Ձանգերը Հռոմի
հնչեցին ողջ գիշեր
ի նշան կատարման
այս ուխտի աննշմար:

Տարբեր խմբեր են երգում խաչմերուկներում, երգում են երեխաները դայակների հետ, երգում են խմած գեղուհիները՝ վարագուրված լուսամուտներով կառքերի մեջ, երգում են զինվորները՝ հարազատ վայրերի կարոտից, երբ նկարվում են խենիլյան գետափում:

Դա ինքը ուրախությունն է, փողոցների ժպիտն ու անդալուզյան ավյունը և չանհետացող մշակույթի ժողովրդի ամբողջ հմայքը:

Բայց ահա, մեկ առ մեկ անցնելով մարդաշատ փողոցներով, դուրս ես գալիս հուդայական ծայրամաս և տեսնում ես անապատը: Եվ այլ վիլյանսիկո է հնչում մութ տխրությամբ: Ո՞վ է երգում: Դա հենց Գրանադայի նվիրական ձայնն է, լացող ձայնը, ստվերներով բնակեցված երկու լքված ամրոցների մոտ Արևելքի ու Արևմուտքի կռվի արձագանքն է: Կարլոս Հինգերորդի և Ալ-Համբրայի:

Սիրածս եկավ ու անցավ,
անցավ կողքովս:
Գլխարկի շուքն էր ծածկել.
Չտեսա դեմքը ես:
Լայնեզը գլխարկներն էդ
ատեցի, ես ու իմ հոգին:
Կհանեմ մուռս, երբ գնեմ
մոտեցող ջրօրհնեքին:

Հոսում է ծննդյան վերջին ծիսերգը և քաղաքը ննջում է հունվարյան ցրտի մեջ: Բայց փետրվարի մոտերքում արևն ավելի պայծառանում է ու ոսկևորվում, մարդիկ գնում են դեպի լույսը, գնում են քաղաքից դուրս խնջույքի, ձիթենուտներում ճոճանակներ են կախվում և լսվում են նույն պարային «էյ-հեյները», ինչպես իսպանական հյուսիսի լեռներում:

Ողջ Գրանադայում ժողովուրդը երգում է սառցի տակ խոխոջող ջրի հետ համերաշխ: Եվ խմբվելով ճոճանակների մոտ՝ զննում են ոտքերը. դեռահասները բացեիբաց, մեծերը՝ թաքուն: Սակայն քամին դեռ ոսկոր է ծակում:

Ծայրամասերը այս պահերին սուս են: Միայն շներն են ու ձիթենիների խշշոցը, և մեկ էլ շըլըմփ՝ շեմից դուրս են թափում լվացքաջուրը: Բայց դրա փոխարեն ձիթենուտներում խառնաշփոթություն է:

Աղջիկը ճոճանակից
չի ուզում դեռ կտրվի:
Նայում է տղան ցածից.
պարանը չկտրվի՞:
Ո՞ւր կընկնի
նա իր ճոճից.
կարոտիս
հեռու պոչին:

Այս երգերից մի քանիսը 15-րդ դարի հնչող արձագանքն են.

Ձիթենու պուրակ, մայրիկ,
կգնամ այս իրիկուն,
կնայեմ, թե ինչպես է
ճյուղերը քամին ճոճում,
ճյուղերը քամին ճոճում:
Կնայեմ, թե ինչպես է
քամին նրանց ճոճում:

Մեղեդին համարժեք է այն հոյակապ մեղեդուն, որ 1560 թվականին գրի առավ Խուան Վասկեսը.

Բարդիներին այցելեցի նվիրական,
տեսնելու, թե քամին ոնց է դաղում նրանց:
Տրիանում, բարդիների շվաքում թաց,
իմ ցանկալին մեն մի անգամ ինձ տեսակցեց:

Բարդիներիդ հայացքի տակ, Գրանադա,
իմ հաճելին այցի եկավ իր նայադին:
Տեսնելու, թե քամին ոնց է դաղում նրանց,
բարդիներին այցելեցի նվիրական:

Դասական ավանդույթը իր ողջ գեղեցկությամբ թևավորում է ձիթենու պուրակների այս երգերը:

Զարմանալու հարկ չկա. ախր Իսպանիայում մինչև այսօր էլ իրենց նախաստեղծ տեսքով հնչում են Խուան դել Էնսինի, Ֆուենլանի, Սալինասի և Պիսադորի երգերը և մեկ-մեկ էլ հարություն են առնում Գալիսիայում կամ էլ Ավիլում:

Գիշերվան մոտ մարդիկ լքում են պուրակը, բայց հաճախ չեն ցրվում, այլ լուսացնում են մեկնումեկի ծածկի տակ:

Իսկ գարնանը, երբ կանաչ բողբոջները հազիվ ծիլ են տվել, լայն բացվում են պատշգամբները և ամեն ինչ անճանաչելիորեն փոխվում է: Կարծես թե մոլորվել ես ձյուներում և մեկից դեմ ես առնում Հարավի դարպասներին:

Փողոցում երևում են աղջիկները, իսկ իմ մանկության տարիներին այգու նստարանին հայտնվում էր Լուսնասեր մականունով տարաբախտ բանաստեղծը: Ծովափից տակառներով թարմ գինի են բերում, և քաղաքը մթնշաղին երգում է այս երգը՝ մունետիկը ցլամարտի, զուլալ, ինչպես մարտյան վերջին օրվա օդը.

Չինիտաս սրճարանում
Պակիրոն վեճն ավարտեց.
— Եռակի, քան դու, գնչու,
խիզախ եմ արենայում:
Պակիրոն նայեց ժամին
ու եղբորն ասաց վստահ.
— Կսատկի ցուլը չորսին,
դու գիտես. տերն եմ խոսքիս:
Էն չորսը երբ մոտեցավ,
եղբայրներն ելան փողոց:
Պակիրոն Էնպես անցավ՝
չես նայի առանց հոգոց:

Հետո էլ ի՞նչ: Երկու մտերիմներ հանդիպում են Խաչակիրների դարպասի մոտ, որով քաղաք են մտել կաթոլիկ թագավորները.

— Բարիաջողում: Ի՞նչ կա Գրանադայում:

— Աստծու բարին: Ինչպես եղել է:

— Մարդիկ ի՞նչ բանի են:

— Ի՞նչ բան ու գործ. ո՞վ է տերը.
անվերջ զամբյուղ են գործում,
և ղողանջում են անվերջ զանգերը:

Ապրիլից մինչև հունիս Գրանադան մի համընդհանուր զանգի ղողանջ է: Ուսանողները չեն կարողանում պարապել: Վիվարամբլ հրապարակի տաճարի զանգերը, ամպերի ու ջրիմուռների մեջ թաքնված ստորջրյա զանգերը չեն թողնում գյուղացիներին իրար ձայնածել: Սան-Խուանի զանգերը օդից տաշում են հեծեծանքների և բրոնզե որոտի ճոխ մի զոհասեղան: Եվ լոկ Ալ-Համբրան է դառնում ավելի թշվառ, ավելի մարդախույս, ծվատված, մեռած, քաղաքին օտար ու հեռու, ինչպես երբեք: Սալարկած փողոցներում պաղպաղակի

սայլակներն են, իսկ վաճառարկղերին չամիչով ու չամանով պաքսիմատներ են, և ամենուր ծախում են մեղրով եփած բակլայի պտուղներ:

Ծորում է Տիրոջ Մարմնի տոնը իր հսկաներով ու գաճաճներով և Տարասկա հրեշով: Գրանադացի աղջիկներն իրենց չարխաքաշ թևերով և ծոցով՝ ինչպես մութ մագնոլիա, հրավառության ջութակների, կրծկալների ճոխ թելերի մոլեգնության մեջ մեկից բացում են հովանոցները՝ կանաչ, նարնջագույն, կապույտ և լողում են հառաչանքների, սիրո և կարոտի կարուսելով դեպի հրավառության հրաշք թագավորություն, դեպի կախարդական «գնաս-կկորչես» աշխարհը:

Գրանադայի հարթավայրի կողմից կաստանյետների տոնական կարկուտն է, իսկ նրան ամենահնագույն փողոցներից մեկից՝ Էլվիրայից ընդառաջ է գալիս.

Ահա Էլվիրա փողոցով,
ընկերուհի երեք խափլան
գիշերով գնում են Ալ-Համբրա
և միշտ էլ առանց ուղեկցող,—

քաղաքային խաղիկը, որը ամենակոլորիտովն է.

Այն թփի տակ, թփուտի,
շվաքում խոտի
Սիրելիս շունչն է պահել:
Օրն ինչ թախծոտ է:

Այն թփի տակ, թփուտի,
շվաքում բոխու
սիրելիս շունչն է պահել,
որ էլ չդողա:

Այն թփի տակ, թփուտի,
շվաքում հերվա
սիրածս շունչն է պահել:
Փակել են վրաս:

Հրավառության վերջին բռնկման հետ, երբ հազիվ փլվում է Գրանադայի վրա նրա ավարտական որոտը, մի մարդու պես բոլորը լքում են քաղաքը, և այն հանձնում ամռան տապին, որն անցնում է ակնթարթորեն: Սպիտակ ծածկոցներով բազմոցները թափուր են, պատշգամբները՝ փակ: Նրանք, ովքեր մնացել են, տեղափոխվում են բակ կամ ներքնահարկ, սառցաջուր են ծծում բուրավետ վարդագույն կավե կժերից: Ապրում ու մտածում են գիշերով: Դա այն պահն է, երբ ողջ քաղաքը գրանադինա և ֆանդանգո է երգում կիթառի նվագի ներքո՝ այնպես հովվերգական ու այնպես քեֆովցած հեռու-հեռուներով: Այսպես է եղել հավիտյանս հավիտենից: Անցած ամառ, երբ ես ընկերներիս հետ, որոնք բոլորն էլ պարզ մարդիկ են, երգում էի՝ մեր կողքին ռումբ պայթեց. գոնե մեկը հոնքը շարժեր: Միայն մեկը հավանություն տալու պես ասաց՝ ինչ լավ համընկավ: Այսպես է բանը: Բայց այսօր ես կիթառ չունեմ, դուք գրանադինա չեք լսի: Մի ուրիշ անգամ: Բայց հենց ամռանն են երգում գրանադինան, նաև ռոմանսներ:

Բոլոր ռոմանսերոները ցայտում են մանկանց շուրթերին: Ամենադյութիչ բալլադները, որոնց չի գերազանցել ոչ մի ռոմանտիկական բանաստեղծ, ամենաարյունոտ լեգենդները բառային մի աննկարագրելի հրավառություն են: Այս բոլորը անսպառ է: Վերցրեք պատահականը, ասենք այն, որ տղաները երգում են գյուղերում, իսկ Ալբայսինի քաղաքային հրապարակում երգում են աղջիկները:

Օգոստոսյան գիշերով ո՞ւմ չի հափշտակի հերցոգ Ալբայի մասին ռոմանսի այս քնքուշ մեղեդին.

Սևիլյայում բամբասանք կա,
հազար ու մի այդպիսի բան,
թե ուրիշ մի աղջկա է
ընտրելու հերցոգ Ալբան:
— Թող ընտրի ում որ կուզի.
այդ լուրը ինձ հեչ չի հուզում:
— Ամոթ բան է. քիչ ուշ, քիչ շուտ՝
պատվի վրա բիծ է անշուշտ:
Վերնահարկի պատուհանից
նա նայում էր ներքև՝ փողոց,
որ լեցուն էր ժողովրդով:
Իսկ հերցոգը շատ անվրդով
թևանցուկ էր արել արդեն
իր նորընծա ընկերուհուն:
Նշաններ են պայմանական
իշխանի հետ առնում-տալիս.
— Հը, ի՞նչ կա էլ՝ Աննա Մարիա:
— Օ՜, իմ հերցոգ, հերցոգ Ալբա,
դու իմ միակ, իմ ցանկալի,
բամբասա՞նք է, թե ճիշտ, ասա,
հարսանիքի ամբո՞խ սա:
— Չգիտեմ էլ ինչ ես լսել,
նշանվելս ճիշտ են ասել,
հարսանիքն էլ վաղն է: Ահա,
քեզ էլ հյուր եմ կանչում, Աննա:
Բայց ավարտեց խոսքը, թե չէ՝
Խեղճ Աննայի սիրտը ճաքեց:
Զարմանք բան էր: Դե, կանչեցին
Այլադավան մի բուժակի,
և բուժակը սիրտը բացեց:
Այնտեղ գտավ ոսկե գրեր՝
սրտիկի մոտ, մի քիչ վերև,
իսկ սրտիկը ամբողջ վերք էր:
Վերևում կարդացին «հերցոգ»,
ներքևում՝ «իմ ցանկալի»:
— Ախ, եթե ես իմանայի,
որ սրտումդ ես եմ միայն,
իմ աղավնյակ, իմ Մարիա,
ես քեզ մի՞թե կլքեի:

Կարմիր կածանով թաթերի վրա գողունի մոտենանք խմբված մարդկանց, որոնք կիսով չափ երևում են ձորակից: Այստեղ երգում են ու պարում: Հնչում են կաստանյետները, կիթառը և զուտ խաշնարածների գործիքներ՝ եռանկյունիներ ու դափ:

Նրանք երգում են ռոաս և ալբորեաս, և՛ կաչուչու, և՛ այն նույն սորոնգոն, որն այնպես տիրաբար մտավ Ֆալյայի երաժշտության մեջ:

Դեղին հեռուներից դեպի լեռներն է քաշվում օրը և նրա հետ գնում են հնձի ու կալի երգերը, սակայն դաշտերի այդ աշխարհը Գրանադա չի թափանցում... (ձեռագրում էջ է պակասում):

Սեպտեմբերն է դրսում, ոսկորս մրսում է,
վերջին դարձն է անիվը անում:
Դարձիր, ակ. քո դարձը նախշուն է,
չէ՞ որ դեռ ճամփին է աշունը:

Եվ սկսվում են խնջույքները: Ալ ալոճով ու մասուրով, սերկևիլի թեջերով ու բլիթների աշտարակներով, և Կորսոյի փռի նշակարկանդակով:

Միքայել հրեշտակապետը՝ Սան Միգելը իր բարձունքից մեկնում է արևաձաղկով զարդարված սուրը.

Վերևում հին ամրոցի,
նախշերում ձիգ հմուլի
մոմերի բոցով է լի
Սան Միգել եկեղեցին:
Ներքևի իր խորանից,
գիշերվա գեշ նշանով,
սարքովի մի հրեշտակ
հագնում է սոխակի շոր:
Շնչելով թուրմը ծաղկի,
երազում՝ միշտ ցողը թարմ,
ապակե իր տապանում
երգում է առանց մեղքի:
...Սան Միգելն է լոկ այնտեղ
մթան մեջ հանգիստ կանգնած,
զարդարված հմայիլով,
նշանով զոդիակի:
Զարդարված կանգնած է միշտ
բերբերյան իր հմայքով,
նախշերով արաբական,
ինչպես տեր կենտ նիշերի,
լեռների եդեմական...

Բերբերյան հմայք ու արաբական նախշեր— Ձիթապտղի բլրի Գրանադան է: Այն ամենը, ինչ հասնում է այստեղ՝ աղոտ է: Դա ողջ Գրանադայի երգն է, գետերի ու լարերի, ամբոխի և տերևների, մրգի ծովի ու ճոճանակի ծիծաղի միախառնված ու մեկից արձակվող ձայնն է:

Բայց խունանում է Միքայելի օրվա ուրախությունը, և աշունը անձրևների շաչյունով թակում է դռները.

Թըփ, թըփ...
Այն ո՞վ է որ:
— Ներս մտա ես քո շեմով.
թախիծն եմ աշնանային:
Երեսդ ի՞նչ է դառել:
— Քունքերիդ կուպր կա դեռ:
— Քեզ չեմ տա, կորի գնա:
— Կտանեմ, կյանքս վկա:
Թըփ, թըփ...
Նույն մութն է մառ.
— Եկա քեզ իբրև ձմեռ:

Առաջին հեղեղներից կանաչել են հանդերը: Ցրտերն զգալի են, և այգի գնալու հավես չկա այլևս, իսկ խեղճ Լուսնասերը կռացել է թավայի վրա: Մայրամուտները կեսերկնքով են. չտեսնված ամպերը սրբել տարել են Լեռնապարը, և օտար փայլեր են սողոսկում ծածկերի տակ ու մարում են տաճարի զանգակատանը: Նորից անկեղծ կարոտով հնչում է ձայնը.

Քո տան պատշգամբից
գետախորշին կախված
տուր ինձ թաշկինակդ,
վերքս չի կապված:
Քո տան պատշգամբից
հոսող ջրին նայող
տուր ինձ թաշկինակդ,

այլևս չեմ կարող:
Քո տան պատշգամբից,
որ նախշը ոլորուն է,
նետիր թաշկինակդ,
ես մահանում եմ:

Պարզվում է, որ երեխաները տարվել են ֆռռիկ խաղալով ու դպրոցը մոռացել են:

Պարզվում է, որ տներում վառել են ննջեցյալների հիշատակի մոմերը:

Պարզվում է՝ արդեն նոյեմբեր է:

Այրվող ծղոտի հոտ է, և փտում են թափված տերևների կույտերը: Հիշո՞ւմ եք: Հեղեղ է, և քաղաքը դատարկ է:

Սանտա Ֆեից, կամ էլ Արմիլիայից, կամ էլ Ատարֆեից մի աղջիկ, արդեն մի տարով մեծացած և, գուցե սգավոր, երգում է տանտիրոջ երեխաների համար.

Գետանցի այն չորսից,
որ մոտ են ջրհոսին,
այն մեկը՝ ջորովը,
կուզենամ ինձ հասնի:
Գետանցի այն չորսից,
(քիչ մոտ են կայանին)
ջորովը սրտովս է,
կդառնամ նրան կին:

Մենք ճանապարհ դրինք տարին: Այդպես է կարգը: Այսօր և այսուհետ: Մենք մեկնում ենք, իսկ Գրանադան մնում է: Մնում է դարերի մեջ և հալվում է իր որդիներից ամենաանարժանի ահա այս խեղճ ափերի մեջ: